ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Կիրակի, 25 Հոկտ.ի կէսօրէ վերջ, Պատրիարքարանի պատմական մեծ դահլիճին մէջ, ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան և աշակերտաց և ժողովուրդի հոծ բազմութեան, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց – Դուրեան Գրական Մրցանակի պարգևաբաշխութեան 1935–36 շրջանի հանդէսը։ Տ. Մկրտիչ Սրբազան, իբրև Առենապետ Ուսումն. Խորհրդոյ, բացման ընդարձակ և հմտալից ճառ մը կարդաց Հայ Բանահաւաքութեան և ազգագրական գրականութեան մասին։ Ապա Ս. Պատրիարքը կարդաց Մրցանակի բուն Տեղեկագիրը, զոր ինքն էր գրած, ու յետոյ դարձեալ փակման խօսքն ըրաւ։ Ժառանգաւորք և Ս. Թարգմանչաց վարժարանի սանուներ, առաջնորդութեամբ Ս. Աթոռոյ մասնագէտ երաժշտապետ Տ. Պսակ Վրդ.ի (ապա Արքեպս., վախճանած ի Լոնտոն 1981ին — Մ. Խ.) և ընկերակցութեամբ երգիոնի (orgue), քառաձայն երգեցին «Ով յարկ վսեմ», «Ով մեծաքանչ», «Եթէ գիս տանիս» երգերը և «Տէր, կեցո՛» ազգային մաղթերգը, խանդավառելով և սքանչացնելով ամէնքը։

Դշ. 28 Հոկտ.ին, Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մուշեղ և Տ. Տիրան Վարդապետներու և Տ. Արթուն Արզ.ի, մեկնեցաւ Հալէպ, յայց գերեզմանի Հոգելոյս Բարգէն Վեհին։ Իր դարձին պիտի այցելէ նաև Անթիլիասի Դպրեվանքը։

(«Սիոն», 1936, Ժ. Տարի, Նոյեմբեր, Թիւ 11, էջ 352)։

ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Ազգիս հանրութեան ուղղուած ընդհանրական կոնդակով մը, Ամենայն Հայոց Վեհ. Ս. Հայրապետը կը ծանուցանէ թէ արտագինս մխիթարուած է իմանալով թէ ի՞նչ ջերմ ընդունելութիւն գտած է Ս. Գրոց ոսկեդարեան Հայերէնի թարգմանութեան 1500ամեակի կատարման մասին իր հայրապետական հրամանը։

Ուրիշ սրբատառ կոնդակով մը, Ն. Ս. Օծութիւնը իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէ Աստուածաշունչի Հայերէն թարգմանութեան Յոբելեանի ազգովին կատարման գործը կազմակերպելու համար Ս. Աթոռոյս մէջ այն ատեն գոյութիւն առած կեդր. Յանձնաժողովին և, ի նշան իր հայրապետական գնահատութեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի պատուանշանին Ա. կարգի ականակուռ խաչը կը շնորհէ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր։

Դարձեալ, երկու առանձին սրբատառ կոնդակներով, Ն. Վեհափառութիւնը Արքութեան պատիւ կը շնորհէ Ս. Աթոռոյս բազմավաստակ Միաբաններ Լուսարարապետ Գերշ. Տ. Մեսրոպ և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Մկրտիչ Սրբազաններուն։

Ս. Պատրիարք Հայրը, Հալէպէն իր վերադարձի Շբ. երեկոյին իսկ, Նոյեմ. 7ին, Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ հաւաքելով ամբողջ Միաբանութիւնը, պաշտօնէութիւնը և ուսուցչութիւնը, պատշաճ հանդիսութեամբ կարդալ տուաւ երկու կոնդակները, և ջերմ շնորհաւորութեան խօսքերով անձամբ յանձնեց զանոնք երկուքին, որոնց յետոյ շնորհաւորութեան յարգանք մատուցին ամէնքը։

(«Սիոն», 1936, Ժ. Տարի, Դեկտեմբեր, Թիւ 12, էջ 382)։

digitised by A.R.A.R.@